ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՎՐԱՍՏԱՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՆԱՏՕ-ԻՆ ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՈՒՂԵԳԻԾԸ

«Վրաստանը կշարունակի ՆԱՏՕ-ին անդամակցելուն ուղղված ջանքերը»,- իր ելույթում ասաց Գիորգի Մարգվելաշվիլին եւ շարունակեց.

-Վրաստանի անվտանգության գերակայությունը ՆԱՏՕ-ին ինտեգրվելն է եւ դաշինքին անդամակցելը, մենք կշարունակենք ջանքերն այդ ուղղությամբ,- ասաց Մարգվելաշվիլին:- Մենք ՆԱՏՕ-ին ինտեգրվելու ճանապարհին աշխատում ենք ոչ միայն քաղաքականապես, այլեւ դաշինքի չափորոշիչների հիման վրա երկրի անվտանգության ամրապնդման առումով:

ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԱՐԺԵՔ ԱՆԴԱՄՆ Է

- Վրաստանը Եվրոպայի լիարժեք անդամն է, այլ ոչ թե հյուր՝ եվրոպական ընտանիքում,- իր ելույթում ընդգծեց Վրաստանի նախագահը:

- Մեր պատմական ընտրության հիման վրա ես 2016 թվականը հայտարարել եմ եվրոպական պետության տարի, որը հանդիսանում է նախորդ սերունդների պայքարի շարունակությունը: Հենց այդ նպատակն էր իր առջեւ դրել (նախկին վարչապետ) Զուրաբ Ժվանիան, երբ ասել էր. «Ես վրացի եմ, նշանակում է՝ ես եվրոպացի եմ: Ես Վրաստանը եվրոպական ընտանիքում տեսնում եմ ոչ թե որպես հյուր, այլ որպես այդ միավորման լիիրավ անդամ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՐԳԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇԱՀԵՐԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին խորհրդարանում ունեցած իր ամենամյա ելույթում, անդրադառնալով Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցին, հայտարարեց, որ Վրաստանը ձգտում է Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալուն:

Ինչպես մյուս բոլոր երկրների, այնպես էլ՝ Ռուսաստանի պարագայում, Վրաստանը ձգտում է հավասարության վրա հենված հարաբերություններին: Միասնական, կայուն, զարգացած ու ժողովրդավարական Վրաստանը Կովկասում կայունության ու բարեկամության հարաբերությունների երաշխիքն է:

Գիորգի Մարգվելաշվիլու հայտարարությամբ, Ռուսաստանը պետք է հարգի Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու շահերը. «Որպես պետության ղեկավար՝ ես եւս մեկ անգամ հաստատում եմ Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններին Վրաստանի ձգտմանը, որոնք հենված կլինեն փոխադարձ շահերի, տարածքային ամբողջականության ու հավասարության հարգանքի վրա»,- ընդգծեց նախագահը:

ՎՐԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԿՈՂՄՆՈՐՈՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԱԳ ԱՃԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Երկրի օրենսդիր մարմնին ուղղված ելույթում Վրաստանի նախագահն ընդգծեց այն մարտահրավերները, որոնք ծառացած են երկրի առջեւ: Նրա խոսքերով, 2015 թվականը բարդ էր ինչպես քաղաքական, այնպես էլ՝ տնտեսական առումով: Տնտեսական աճի գլոբալ դանդաղումը, դոլարի ամրապնդումը, մինչեւ պատմական նվազագույնը նավթի գների անկումը, ռուս-թուրքական հարաբերությունների սրման արդյունքում տնտեսական հիմնախնդիրները, Ուկրաինա-Ռուսաստան դիմակայության ֆոնի վրա արժեզրկումը, նախագահի խոսքերով, այն մարտահրավերներն են, որոնք ծագել են ողջ աշխարհի, այդ թվում՝ նաեւ Վրաստանի առջեւ:

Նախագահի հավաստմամբ, Վրաստանի համար բարդ կլինի նաեւ 2016 թվականը: Երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին առանձնակի ընդգծեց վարչապետի չորս գլխավոր նախաձեռնությունները՝ աշխատատեղերի ստեղծմանը կողմնորոշված բարեփոխումները, կառավարության կողմից որոշումների ընդունման գործընթացում գործարարության ներգրավումը, տարածաշրջանային զարգացման շեշտադրումը եւ տարածաշրջանային ենթակառույցային նախագծերի արագացումը, կրթական համակարգի հիմնարար բարեփոխումը:

ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ՈՐԱԿՅԱԼ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿՎԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին երկրի խորհրդարանում իր ամենամյա ելույթում հայտարարեց, որ, չնայած բարդություններին, պետությունը պետք է շարունակի ու զարգացնի որակյալ եւ մատչելի առողջապահության քաղաքականությունը՝ դրանով իսկ պաշտպանելով ամենակարեւորը՝ իր քաղաքացիների կյանքը: Նախագահի խոսքերով, առողջապահության ոլորտում իրականացվելիք բարեփոխումների գլխավոր նպատակը երկրի քաղաքացիների կյանքի պայմանների դյուրացումն է: «Մենք առավել ակտիվորեն ենք օգտագործելու բյուջետային միջոցները, այդ թվում՝ նաեւ սոցիալական քաղաքականության դիֆերեցման ուղիով»,- հայտարարեց նախագահը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ

Երկրի խորհրդարանին ուղղված իր ամենամյա ելույթում Վրաստանի նախագահն անբավարար համարեց այն օրենքը, որը սահմանում է գլխավոր դատախազի ընտրության նոր կարգը, եւ հայտարարեց, որ դատախազության համակարգային բարեփոխումն անհրաժեշտություն է: «Այդ տեսանկյունից նպատակահարմար կլինի դատախազական խորհրդին լիազորել՝ մասնակցելու գլխավոր դատախազի նշանակման կամ պաշտոնաթողության գործընթացին: Միաժամանակ, խորհուրդը պետք է ուժեղացվի քաղաքացիական հասարակության եւ գիտնական իրավագետների կողմից»,- նշեց նախագահը:

Գիորգի Մարգվելաշվիլին անդրադարձավ նաեւ դատարանների թեմային՝ նշելով, որ նախագահական իր լիազորությունները կօգտագործի դատարանների ամրապնդման համար: «Իմ կողմից անցկացվող կադրային քաղաքականությունը հիմնված է ընտրվող դատավորների մասնագիտական հեղինակության եւ մաքրության վրա: Նման մոտեցում ապագայում կլինի նաեւ գերագույն եւ Սահմանադրական դատարանների հարցով»,- հայտարարեց նախագահը եւ հավելեց, որ, ցավոք, դատական իշխանության համալրման կապակցությամբ հասարակությունում հնչում է արդարադատության քննադատություն:

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ 2012 թվականից հետո երկրում իրավիճակը կարգավորվեց, թեպետ միտումները հարկ է խորացնել:

Գիորգի Մարգելաշվիլին նպատակահարմար է գտնում ընտրական բարեփոխումներն իրականացնել մինչեւ 2016 թվականի ընտրությունները: «Անցյալ տարի վրացական քաղաքական ողջ սպեկտրը, ինչպես խորհրդարանական, այնպես էլ՝ ոչ խորհրդարանական ուժերը, ոչ կառավարական կազմակերպությունները միավորվեցին քաղաքական ընդհանուր միտման շուրջ, որը նախատեսում է մեծամասնական համակարգի փոփոխում, առավել արդարացի համամասնական համակարգով: Դա իր հաստատումը գտավ նաեւ հասարակության կողմից, ինչը վավերացրեց օրենսդրական նախաձեռնության օգտին տրված 240 հազար ստորագրությամբ: Տարաձայնությունը միայն նորամուծության ներդրման ժամկետներում է՝ 2016, թե՞ 2020: Մենք կրկին կոչ ենք անում քաղաքական սպեկտրին փոփոխություններն իրականացնել 2016 թվականի ընտրությունների համար: Դա համարում ենք հնարավոր ու իրատեսական: Ընդսմին, պետք չէ մոռանալ, որ ընտրություններ են անցկացվելու նաեւ 2017, ինչպես նաեւ 2018 թվականներին:

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԵԼՈՒՅԹԻՆ

«ՆԱԽԱԳԱՀԸ ԻՐ ԵԼՈՒՅԹՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ ԱՐԵՑ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, անդրադառնալով երկրի խորհրդարանում Վրաստանի նախագահի ելույթին, նշեց, որ այն «բավականին հետաքրքիր» էր: Նրա խոսքերով, նախագահը նշանակալի շեշտադրումներ արեց: Վարչապետը գոհունակություն հայտնեց այն կապակցությամբ, որ նախագահը համամիտ է կառավարության բարեփոխումների չորս կետից բաղկացած ծրագրին: «Ողջունում եմ այդ հարցով կարծիքների համընկնումը: Ընդհանրապես, հարկ է ասել, որ Վրաստանում ինստիտուցիոնալ ժողովրդավարության շինարարության համար կարեւոր նշանակություն ունի սահմանադրական գործընթացը: Բնականաբար, ներդրողներին եւ միջազգային գործընկերներին պետք է Վրաստանը պատշաճորեն ներկայացնել: Կրկնում եմ, որքան կարգավորված լինի այդ գործընթացը, այնքան լավ կլինի Վրաստանի ինչպես արտաքին, այնպես էլ՝ ներքին վարկանիշի համար»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիիլին:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին դրական գնահատական տվեց նախագահի ելույթին եւ հայտարարեց, որ վերջին մեկ ամսվա ընթացքում խորհրդարանում ելույթ են ունեցել ինչպես վարչապետը, այնպես էլ՝ նախագահը, եւ երկու ելույթներում էլ ընդգծվեցին միանման միտումներ: «Բավականությամբ ցանկանում եմ նշել, որ մենք տեսանք միանման միասնական դիրքորոշումներ եւ հայացքներ երկրի զարգացման, երկարաժամկետ ռազմավարության մոտակա առաջնահերթությունների կապակցությամբ: Դա ուրախացնող հանգամանք է, քանի որ երկրի սահմանադրական տարբեր մարմինները, ինստիտուտներն արտահայտում են միասնական պետական դիրքորոշումներ»,- հայտարարեց Ուսուփաշվիլին:

Իրավական ոլորտում իրականացվելիք բարեփոխումների հարցով, գործադիր իշխանության եւ նախագահի դիրքորոշումների համընկնումը ողջունեց նաեւ **Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին**: «Ուրախ եմ, որ դատական բարեփոխումների անհրաժեշտության հարցում կառավարության եւ նախագահի կարծիքը համընկնում է, թեպետ դա բավարար չէ: Ինչպես նշեց նախագահը, բարեփոխմանը գլխավոր սուբյեկտը պետք է լինի արդարադատության Գերագույն խորհուրդը, որն առավել ակտիվ է գործելու: Արդարադատության Գերագույն խորհուրդը եւ խորհրդի անդամները պետք է միավորվեն դատարանի առողջացման հարցում»,- հայտարարեց Ծուլուկիանին:

ԳՈԳԻ ԹՈՓԱՁԵԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ԱԼԻՔ ԲԱՐՁՐԱՁՐԻՆ



Փետրվարի 3-ին, Վրաստանի խորհրդարանում նախագահի ամենամյա ելույթից հետո, սահմանված կարգի համաձայն, հակիրճ խոսքով ելույթ ունեցան օրենսդիր մարմնի մեծամասնության եւ փոքրամասնության ներկայացուցիչները, խմբակցությունների ղեկավարները: Ելույթ ունեցողները իրենց դիրքորոշումները հայտնեցին նախագահի ելույթի առթիվ՝ ներկայացնելով առանձին դիտողություններ եւ առաջարկություններ: Ընդհանուր հոսքից որոշակիորեն տարբերվեց խորհրդարանի «Արդյունաբերողներ» խմբակցության ղեկավար, «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի ներկայացուցիչ Գոգի Թոփաձեի ելույթը: Թոփաձեն իր խոսքում նախագահին մեղադրեց անշնորհակալության, իր նախընտրական խոստումներից հրաժարվելու, ընդհանրապես վրաց ազգի արժանապատվության նսեմացման մեջ:

Թոփաձեի ելույթը լուրջ տարաձայնությունների պատճառ դարձավ ինչպես կառավարող կոալիցիայի, այնպես էլ՝ հասարակության լայն շրջանակներում:

Ավելին, քաղաքացիների առանձին խմբեր բողոքի ցույցեր անցկացրին՝ պահանջելով, որ պատգամավորը նախագահից ներողություն խնդրի ոչ կառեկտ արտահայտվելու, անձնական վիրավորանք հասցնելու համար: Թոփաձեի դատապարտմամբ, հանդես եկան նաեւ կառավարող կոալիցիայի առանձին ներկայացուցիչներ:

Հատկանշական է, որ Թոփաձեն համառորեն հրաժարվում էր ներողություն խնդրել, թեպետ ի վերջո, նա իր արտահայտությունների համար Գիորգի Մարգվելաշվիլուց ներողություն խնդրեց միայն Բիձինա Իվանիշվիլու կողմից դիտողություն ստանալուց հետո:

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ✻ ²ÚÈ²½²Ü ✻ ÊàðÐàôð¸Üºð

ì ÆÖ²Î²¶ðàôÂÚàôÜ

ԱՇԽԱՐՀԻ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԿԵՍԸ՝ ՄԵԿ ՏՈԿՈՍԻՆ

Լսել եմ, որ գործում են առանձին կազմակերպություններ, որոնք ոչ միայն պետությունների, այլեւ առանձին անհատների հաշվարկմամբ, հետազոտություններ են անցկացնում բնական եւ մտավոր աշխատանքով ստեղծված հարստության բաշխման ուղղությամբ: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:

Ս. Մուրադյան

Թբիլիսի

Իրոք, նման կազմակերպություններ գործում են: Մասնավորապես, դրանցից մեկի՝ Oxfam բրիտանական բարեգործական կազմակերպության հաշվարկներով, աշխարհի 1 տոկոս ամենահարուստ մարդկանց (մոտավորապես՝ 73 մլն մարդ) կարողությունը հավասարվել է մնացած ամբողջ մարդկության կարողությանը: Այդ մասին հաղորդել է Oxfam-ը եւ հաշվարկել, որ 62 ամենահարուստները տիրում են նույնքան ակտիվների, որքան եւ մոլորակի բնակչության ամենաաղքատ կեսը: 2010 թվականին 388 ամենահարուստ մարդիկ իրենց կարողությամբ հավասարվել էին ամբողջ բնակչության 50 տոկոսի կարողությանը:

Հաշվարկների համար կազմակերպությունն օգտագործել է աշխարհի խոշորագույն բանկերից մեկի՝ Credit Suisse-ի հոկտեմբեր ամսվա տվյալները:

Աշխարհի ամենահարուստ մարդկանց 10 տոկոսի մեջ մտնում են մոտավորապես 69 հազար դոլարի ակտիվներ ունեցող մարդիկ, իսկ 760 հազար դոլար գումարի ակտիվները դրանց տերերին թույլ կտան հայտնվել մոլորակի 1 տոկոսը կազմող ամենահարուստ մարդկանց թվում:

Oxfam կազմակերպությունը շվեյցարական Դավոսում, Համաշխարհային տնտեսական համաժողովի նախաշեմին, որտեղ ամեն տարի հավաքվում են աշխարհի ամենազդեցիկ մարդիկ, փորձում է ուշադրություն գրավել աշխարհում աճող անհավասարության վրա:

Ðð²Î²ä

ՇԱՐՖ՝ ԳՐԻՊԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գրիպի տարածման ներկայիս պայմաններում հնարավոր ամեն ինչ օգտագործում ենք ինքներս մեզ պաշտպանելու համար: Գնում ենք դիմակներ, դեղորայք, թեպետ միշտ չէ, որ դրանք փրկում են: Ցանկանում եմ իմանալ, էլ ինչ նորամուծություններ կան վարակից ապահովագրվելու համար:

Տ. Մարտիրոսյան

Բաթումի

Բարեբախտաբար, գիտնականները աշխատում են այդ ուղղությամբ: Մասնավորապես, ամերիկյան Բրուկլին քաղաքի գյուտարարներն ստեղծել են գրիպից եւ այլ վարակներից պաշտպանող շարֆեր: Շարֆերն ստեղծվել են բժիշկների հետ համագործակցության արդյունքում: Դրանք կարող են մարդկանց պաշտպանել օդում առկա վնասակար քիմիական միացություններից:

Շարֆը ստացել է Scough անվանումը, որն իրենից ներկայացնում է պարանոցը եւ դեմքի ներքեւի հատվածը ծածկող կտոր: Շարֆի մեջ տեղադրված է դիմակ՝ ախտահանող զտիչով, որը պետք է փոխել յուրաքանչյուր 3 ամիսը մեկ:

Շարֆերի գներն առցանց վաճառքում տատանվում են 29-ից 69 դոլարի սահմաններում:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱԾՈՒՆԸ ԿՊԱՇՏՊԱՆԻ ՄԱԶԵՐԸ

Կարելի է օգտագործել մածուն, կեֆիր կամ թթված կաթ: Այս մթերքները յուղի թաղանթ կստեղծեն, որը մազերը կպաշտպանի շրջակա միջավայրի թունավոր ազդեցություններից:

Մածունով պետք է առատորեն գլուխը թրջել եւ մազերը ծածկել պոլիէթիլենային թաղանթով, այնուհետեւ փաթաթել խավավոր սրբիչով: Կես ժամից սովորական գոլ ջրով մազերը լավ լվանալ, այնուհետեւ պարզաջրել մեկ կիտրոնի հյութի կամ քացախի ջրային լուծույթով (1 ճ.գ. քացախին՝ 2 լ ջուր):

Կեֆիրը լուծել տաք ջրի մեջ եւ այդ խառնուրդով լվանալ մազերը:

Թարմ եւ գեղեցիկ տեսքի համար պատրաստեք հետեւյալ լոսյոնը:

Սովորական ջրին ավելացրեք կաղամբի թթվաջուր (1:1): Դրանից հետո պետք է լվացվել գոլ ջրով եւ մաշկը չորացնել փափուկ սրբիչով:

Առավոտյան լվացվեք սառույցով (տարբեր խոտերի թուրմից պատրաստված): Մաշկի առողջ գույնը, տոնուսը եւ գեղեցկությունն ապահովված կլինեն:

ԿԱՅԱՆԱԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ԱՄԵՆ ԻՆՉ ՀԻՇԵԼ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԵՎ ՊԵՏՔ ՉԷ

Որոշ դեպքերում մոռանալու մեջ սարսափելի բան չկա

Մեկ անգամ Բեռնարդ Շոուն Լոնդոնում գնացք էր նստել, բայց տոմսը մոռացել էր տանը: Ճանապարհին հսկիչը հայտնաբերեց, որ գրողն առանց տոմսի է ճանապարհորդում, բայց, ճանաչելով իր նշանավոր հայրենակցին, խոստացավ նրան չտուգանել: Այնուամենայնիվ, Շոուն մտահոգված էր. «Շնորհակալ եմ, իհարկե, բայց իմ խնդիրն այլ է՝ տոմս չունենալով ես չեմ հիշի, թե ո՞ւր էի պատրաստվում գնալ»:

Ալեքսանդր Բորոդինը, որը համաշխարհային բարձունքների էր հասել թե՛ երաժշտության եւ թե՛ գիտության (քիմիայի) բնագավառներում, նույնպես հայտնի էր իր ցրվածությամբ: Մի անգամ, երբ կնոջ հետ արտասահման էր մեկնում, նա չկարողացավ պատասխանել սահմանապահի հարցին, թե ի՞նչ է կնոջ անունը: Սահմանապահն արդեն սկսեց կասկածանքով նայել Բորոդինին, երբ սենյակ մտավ կինը: Կոմպոզիտորը վազելով մոտեցավ կնոջը եւ բացականչեց. «Կատյա, ի սեր Աստծու, ասա նրան, թե ինչ է քո անունը»:

Գուցե դրանք լեգենդներ են, բայց բավականին ուսանելի՝ այն առումով, որ մարդիկ կենտրոնանում են ինչ-որ մի բնագավառի տեղեկատվություն հիշելու եւ վերարտադրելու վրա եւ չեն կարողանում իրենց ուշադրությունը հավասարապես բաշխել բոլոր երեւույթների վրա՝ որոշ բաներ ժամանակավորապես կամ մշտապես մոռանալով: Ավելին՝ ամեն ինչ հիշելը պաթոլոգիա է, որը կոչվում է «հիպերմնեզիա», երբ մարդը բառացիորեն եւ ամենայն մանրամասնությամբ հիշում է այն, ինչ իր հետ երբեւէ պատահել է: Նման պաթոլոգիա չունեցող մարդիկ ունեն մոռանալու հատկություն, որը երբեմն խանգարում է, բայց առանց որի ուղեղը կդառնա անիմաստ աղբարկղ: Իհարկե, մոռանալու մեխանիզմն օգնում է մեզ նաեւ մեր առջեւ ազնիվ չլինել, այսպես ասած՝ «խիղճը հանգստացնել» եւ չհիշել կյանքի այն դրվագները, որոնք մեզ լավ չեն բնութագրում կամ, համենայնդեպս, հիշել դրանք ոչ այնպես, ինչպես որ դրանք տեղի են ունեցել: Այդ «մոռացկոտությունն», իհարկե, ողջունելի չէ՝ նման բաներ հիշելն անհրաժեշտ է, այլ հարց է, որ պետք չէ ընկնել ինքնախարազանման ծայրահեղության մեջ:

Հիշողությունն, անշուշտ, կարելի է եւ անհրաժեշտ է զարգացնել: Ոմանք ասում են, որ պետք է մեղրաջուր խմել կամ ինչ-որ հաբեր («հիշողության դեղ») ընդունել՝ ես դրան առանձնապես չեմ հավատում: Ինչպես եւ մարդու ֆիզիկական մկանները, այստեղ էլ կարելի է ինչ-որ դեղ սրսկել, որ դրանք «ուռեն», բայց դա, բացի արտաքին էֆեկտից, ոչ մի արդյունքի չի բերի: Այդպես էլ հիշողությունը՝ սա յուրահատուկ «մկան» է, որը պետք է անընդհատ «մարզել»: Դրա վերաբերյալ կա հսկայածավալ գրականություն: Հետաքրքիր է, որ տեսողական հիշողությունն ավելի լավ է «մարզվում», քան լսողականը՝ այն պարզ պատճառով, որ աչքերից դեպի ուղեղ տանող նյարդերը 20 անգամ ավելի հաստ են, քան այն նյարդերը, որոնք մեր ականջներն են կապում ուղեղի հետ: Ի դեպ, վարժություններից մեկը կոչվում է «Այվազովսկու մեթոդ»՝ հայ գեղանկարչի անունով. փակել աչքերը եւ փորձել մտովի վերարտադրել այն, ինչ տեսել ես: Այվազովսկու դեպքում, դա, բնականաբար, ծովն էր՝ իր բազմազան գույներով ու ալիքների ձեւերով: Նկարագրված են տեսողական, լսողական եւ շոշափելու զգայարանների մարզման հազարավոր վարժություններ՝ համացանցում կարելի է դրանք գտնել: Կարեւորն այն է, որ ինչպես եւ ցանկացած այլ «մարզանքի» դեպքում, էականն այստեղ ամենօրյա ջանքն է, ճիգը: Համակերպվենք այն մտքի հետ, որ ինչ-որ բաներ, միեւնույն է, չեն ստացվի, ինչ-որ բաներ կմոռացվեն, բայց, անկախ այդ լավ կամ վատ արդյունքներից, ուղեղը կլինի «լավ մարզավիճակում»: Ընդ որում, տարիքը կարեւոր չէ՝ ուղեղը կարող է «ժանգոտել» 30 տարեկանում եւ «չժանգոտել» 90-ում:

Ի դեպ, համացանցի մասին: Այսօր այնտեղ կարելի է գտնել ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաեւ, իհարկե, ցանկացած աղբ: Բայց մարդկանց նպատակը ոչ թե հնարավորինս շատ տեղեկատվություն պարունակող, համակարգչին հավասար ուղեղ ունենալն է, այլ այդ ուղեղը ստեղծագործաբար օգտագործելը: Այնպես որ, մի տխրեք, եթե ինչ-որ բան եք մոռացել, դա մեծ ողբերգություն չէ:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Արվեստը պետք է լինի աչքի նման պարզ, թափանցիկ եւ աչքի նման բարդ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
(1869-1923)
Հայ բանաստեղծ

Սիրող մարդու կախարդիչ ձեռքով, տատասկն անգամ կփոխվի ծաղկի:

ԻՈՍԵԲ ԳՐԻՇԱՇՎԻԼԻ
(1889-1965)
Վրաց բանաստեղծ

Տղամարդիկ ուշադրություն են դարձնում այն բանին, թե ինչ են մտածում իրենց մասին, կանանց համար կարեւոր է, թե իրենց մասին ինչ են խոսում:

ԿԱՆՏ ԻՄԱՆՈՒԻԼ
(1724-1804)
Գերմանացի փիլիսոփա

Անարգանքը մոռանում են միայն այն ժամանակ, երբ ուրիշ ընտրություն չկա:

ՊԵՏՐՅՈՒՍ ԲՈՐԵԼ
(1809-1859)
Ֆրանսիացի գրող

Դժվար է հավատալ, որ մարդը ձեզ ճշմարիտն է ասում, երբ դուք գիտեք, որ նրա տեղը դուք կստեիք:

ՀԵՆՐԻ ՄԵՆԿԵՆ
(1880-1956)
Ամերիկացի ակնարկագիր

Գլխացավի սինդրոմով տառապող, քնել սիրող եւ սեռական հարաբերություններից խուսափող հարգելի կանայք, շնորհակալություն նման դիրքորոշման համար: Ձեր շնորհիվ, մենք՝ չամուսնացածներս, միայնակ չենք:

Ա.Վ.
«Վրաստանի» ընթերցող
Բաթումիից

²Ü°Î¸àîÜºð

* Ռաբինովիչը տղա է ունենում, հյուրասիրություն է կազմակերպում.

- Որ գաք, դուռը ոտքով կբակեք,- զգուշացնում է հրավիրելիս:

- Բայց ինչո՞ւ ոտքով:

- Դե', հո դատարկ ձեռքով չե՞ք գալու...

* - Դուք տուգանվում եք 1000 դրամ՝ ոստիկանության աշխատակցին վիրավորելու համար:

- Դե', էս 5000-ը վերցրու ու շարունակությունը լսի...

* Պատանին՝ իր ընկերուհուն.

- Կարդալիս անընդհատ քեզ էի հիշում:

- Իսկ ի՞նչ էիր կարդում:

- Ֆիզիկայի դասագիրքը, ձիաուժի դասը...

* - Պա'պ, իսկ ինչի՞ համար են կանայք:

- Ինչի համար, ինչի համար... Նրա համար, որդի'ս, որ տղամարդիկ հասկանան՝ կյանքն ամենեւին էլ մեղր չի...

* Տնօրենը՝ աշխատանքի ընդունվողին.

- Սկզբում ձեզ կվճարենք ամսական 120 դոլար, իսկ հետագայում՝ ավելի շատ:

- Դե', ավելի լավ է ես հետագայում գամ...

* Դատավորը՝ ամբաստանյալին:

- Դուք ստանում եք ամսական յոթանասուն հազար դրամ, իսկ կառուցել եք յոթ միլիոն դոլարանոց տուն: Ինչպե՞ս կբացատրեք դա:

- Մտածելու ժամանակ տվեք...

- Յոթ տարին բավակա՞ն է...

* Բանկը կողոպտած հանցագործները փորձում են ազատվել ոստիկանների հետապնդումից.

-Ինչ անարդար է կյանքը, ամեն անգամ, երբ փող ենք ունենում, անմիջապես խնդիրներ են առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ



Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի ներկայությամբ, փետրվարի 5-ին ստորագրվել է համաձայնագիր՝ ՀՀ կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) միջեւ 2013 թ. սեպտեմբերի 28-ին կնքված օժանդակության համաձայնագրի ներքո իրականացվող «Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» ծրագրի վերաբերյալ:

Փաստաթուղթն ստորագրել են ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը եւ ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի տնօրեն Քարեն Հիլիարդը:

Վերոնշյալ ծրագրի նպատակն է օժանդակություն տրամադրել Հայաստանի կառավարության աշխատակազմին՝ ի կատար ածելու Հայաստանի 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 806.390 ԱՄՆ դոլար, որից ԱՄՆ ՄԶԳ կողմից ծախսերի փոխհատուցում՝ 749.110 ԱՄՆ դոլար, դրամաշնորհառուի ներդրում՝ 57280 ԱՄՆ դոլար:

Ծրագրի իրականացման համար, անհրաժեշտ գործողություններն ու նախաձեռնությունները կընդգրկեն 2016թ. փետրվարի 5-ից 2017թ. ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Գրիգոր Հովհաննիսյանը հունվարի 28-ին իր հավատարմագրերը հանձնեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամային:

ԱՄՆ նախագահը շնորհավորեց Գրիգոր Հովհաննիսյանին հավատարմագրման կապակցությամբ եւ համոզմունք հայտնեց, որ նրա փորձառությունները օգտակար կլինեն հայ-ամերիկյան հարաբերությունների ներկա փուլում երկու պետությունների բարեկամությունն է'լ ավելի խորացնելու եւ ընդլայնելու առումով:

Գրիգոր Հովհաննիսյանը փոխանցեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ողջույններն ու ջերմ բարեմաղթանքները: Նա նաեւ նշեց, որ Սերժ Սարգսյանը ներկա կգտնվի այս տարի Վաշինգտոնում անցկացվող Միջուկային անվտանգության գագաթաժողովին, ինչի համար Բարաք Օբաման հայտնել է իր երախտագիտությունը՝ միաժամանակ բարձր գնահատելով Հայաստանի հանձնառությունը միջուկային անվտանգության այս նախաձեռնությանը:

Իր ուղերձում Բարաք Օբաման նշեց, որ 2015թ. Հայաստանում ԱՄՆ ներդրումների ծավալի պատմական մակարդակի բարձրացումը միայն սկիզբն է մեծածավալ առեւտրային ու ներդրումային կապերի, որոնք առանցքային նշանակություն ունեն ինչպես Հայաստանի, տարածաշրջանի համար, այնպես էլ՝ դրանից դուրս:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը փետրվարի 1-ից նոր կազմով՝ հանձնաժողովի նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ, սկսել է աշխատանքները:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան փետրվարի 2-ին գումարել է նոր կազմով իր առաջին նիստը: Նիստի բացման խոսքում կոլեգիայի նորանշանակ նախագահ Տիգրան Սարգսյանը շեշտել է, որ կոլեգիայի նոր կազմի հիմնական խնդիրն է եվրասիական տնտեսական տարածքում ինտեգրացիոն գործընթացերի խորացումը:

Կոլեգիայի նիստում քննարկվել են առեւտրին եւ անասնաբուժական ու սանիտարական պահանջներին առնչվող մի շարք հարցեր:

Նշենք, որ, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի որոշմամբ, այսուհետ այդ ղեկավար մարմնում Միության յուրաքանչյուր պետություն (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան) ԵՏՀ կոլեգիայի երեք անդամների (նախարարների) փոխարեն, ներկայացված կլինի երկուսով:

Կոլեգիայի անդամների թիվը փետրվարի 1-ից կկազմի 10 մարդ:

Ըստ ԵՏՄ մասին պայմանագրի, ԵՏՀ կոլեգիայի լիազորությունների ժամկետը չորս տարի է:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Հայաստանում գտնվող ՆԱՏՕ-ի Բարեվարքության ամրապնդման ծրագրի փորձագիտական գնահատման (peer review) խմբի անդամների հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փորձագիտական գնահատման խմբի այցի արդյունքներն ու հետագա անելիքները:

Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանը փետրվարի 4-ին ընդունեց Հայաստանում եվրամիության առաքելության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկուն:

Հանդիպմանը քննարկվեցին Եվրամիության կառույցների եւ Հայաստանի պաշտպանության նախարարության միջեւ համագործակցություն ծավալելու հնարավորությունները:

Կողմերը դիտարկել են նաեւ Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ համագործակցության համատեղ առաջնահերթությունների այլ ուղղություններով համագործակցություն նախաձեռնելու նպատակահարմարությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԲԱՂՎԱԾՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԵՆ, ՔԱՆ ՉԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Հայաստանում, 2015 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ, աշխատանքային ռեսուրսը՝ 15-75 տարեկան անձինք, կազմել են 2,1 միլիոն մարդ:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, նրանց 67 տոկոսն աշխատուժն է, այսինքն՝ զբաղված կամ աշխատանք փնտրողները, իսկ 37 տոկոսը՝ մարդիկ, ովքեր աշխատանք չունեն ու չեն էլ փնտրում:

Ըստ տվյալների, նախորդ տարվա երրորդ եռամսյակին առկա է եղել 223 հազար 104 գործազուրկ կամ աշխատուժի 16,6 տոկոսը: Այդ ցուցանիշը նվազել է 9 տոկոսով: Գործազուրկների 56 տոկոսը կանայք են, 44 տոկոսը՝ տղամարդիկ: Գործազուրկների 88 տոկոսը տեղակայված են քաղաքում, 12 տոկոսը՝ գյուղական բնակավայրերում: Գործազուրկների մեջ առաջին հորիզոնականում, որպես կանոն, միջին մասնագիտական կրթություն ունեցողներն են, հետո՝ բարձրագույն կրթություն ունեցողները:

2014-ի տվյալներով, զբաղվածները կազմում են 1 միլիոն 133 հազար մարդ, 2015-ի երրորդ եռամսյակի տվյալներով, 53 տոկոսը կազմում են զբաղվածները:

Ինչ վերաբերում է զբաղմունքի տեսակներին, ապա ամենամեծ խումբը՝ 50 տոկոսը, բոլոր տեսակի բանվորական աշխատանք կատարողներն են, ապա բարձր որակավորում ունեցող մասնագետները՝ 15,1 տոկոս, սպասարկման ոլորտի աշխատողները կազմում են մոտ 10 տոկոս, ղեկավար պաշտոններ զբաղեցնողները՝ 6,7 տոկոս:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԱՃԵԼ Է 3,1 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 3,1 տոկոսով: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում են գրանցել առեւտրի շրջանառության եւ արտաքին առեւտրաշրջանառության ոլորտները:

ԴԱՏԻ Է ՏՐՎԵԼ 72 ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ

Հայաստանի հատուկ քննչական ծառայությունում, 2015 թվականի ընթացքում, քննիչների վարույթում քննված 761 քրեական գործից 356-ը եղել է պաշտոնեական եւ կոռուպցիոն բնույթի: Այդ ցուցանիշը 108-ով ավելի է, քան եղել է 2014-ին:

Ավարտվել է այս բնույթի 193 քրեական գործ, այդ թվում 31-ը՝ 52 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 162 գործի վարույթ կարճվել է: Ինչպես պաշտոնեական-կոռուպցիոն բնույթի, այնպես էլ մյուս հանցագործությունների կատարման համար դատի է տրվել 72 պաշտոնատար անձ: Դատի են տրվել ոստիկանության, անչնագրային բաժանմունքների, մաքսային ծառայությունների աշխատակիցներ, քննիչներ, այլք:

ՆՎԱԶԵԼ ԵՆ 0-4 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Հայաստանում 2015-ին թվականին արյանագրվել է 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերի նվազում: Մասնավորապես, 2015-ին գրանցվել է 370 դեպք, 2014-ի 376-ի համեմատ: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալներով, այդ տարիքի երեխաների մահացությունը հիմնականում պայմանավորված է շուտ ծնական բարդացումներով ու բնածին անկանոնություններով: Բացի այդ, նվազում է արյանագրվել նաեւ 0-4 տարեկան երեխաների մահվան դեպքերում. 2015-ին արյանագրվել է մանկամահացության 435 դեպք, 2014-ի 445 դեպքի համեմատ:

2015-ին կենդանի ծնվածների թիվը կազմել է 41 հազար 815 մարդ, ինչը 2014 թվականի համեմատ նվազել է 2,8 տոկոսով:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐ՝ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ

Հայաստանի արդարադատության նախարարության քրեա-կատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների բաժնի եւ ՀՀ ԿԱ ոստիկանության անչնագրային եւ վիզաների վարչության հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում, 2015թ. հունվարից առ այսօր, վաղեմի խնդրի հանգուցալուծման արդյունքում, 325 դատապարտյալ ստացել է նույնականացման քարտ:

Նույնականացման քարտեր ստացած դատապարտյալներն այսուհետ կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցել քաղաքացիա-իրավական գործարքներին, մասնավորապես, կնքել աշխատանքային պայմանագիր, ֆեւակերպել տարիքային եւ հաշմանդամության կենսաթոշակ, գրանցել ամուսնություն, տրամադրել լիազորագրեր, համաձայնագրեր եւ այլն: Ներկա դրությամբ, նույնականացման քարտեր ստանալու խնդրանքով, քրեա-կատարողական ծառայությանն է դիմել եւս 74 դատապարտյալ:

Գործընթացը շարունակվում է:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐ

6.02.2016. Կոստանդնուպոլսի Սուրբ ժողովի 150 հայրապետների (381թ.) հիշատակության օր

7.02.2016. Բուն Բարեկենդան

Բարեկենդան է կոչվում շաբաթապահքերի եւ Մեծ պահքի նախընթաց օրը: Բարեկենդանին թույլատրվում են չափավոր վայելքներ, խրախճանքներ, խաղեր եւ ուտեստներ: Բարեկենդան բառացի նշանակում է կենդանություն, բարի կյանք:

Մեծ պահքի բարեկենդանը կոչվում է Բուն Բարեկենդան, քանի որ նախորդում է ամենաերկար պահքին:

8.02.2016. Մեծ Պահք

Այս տարի փետրվարի 8-ից սկսվում է Մեծ Պահքի շրջանը: Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերքներ:

Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից եւ այլ մեղքերից: Քառասնօրյա պահքին հաջորդում է պահոց եւս մեկշաբաթյա շրջան՝ Ավագ շաբաթը: Այդ է պատճառը, որ քառասնօրյա կոչվող պահքը 48 օր է տեւում:

Մեծ Պահքն ունի յոթ կիրակի, յոթ հիշարժան օրեր. Բուն բարեկենդան, Արտաքսում, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան եւ Ծաղկազարդ:

Քառասնօրյա պահքին հաջորդում է պահոց եւս մեկշաբաթյա շրջան՝ Ավագ շաբաթը: Ժողովրդական սովորության համաձայն, Մեծ Պահքի կիսվելու՝ Միջինքի օրը, բաղարջից պահոց գաթա են պատրաստում, որի մեջ մետաղադրամ են դնում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է ԱՆՎԱՇՂԹԱՆԵՐՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտից հայտնել են, որ փետրվարի 3-ից Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը շուրջօրյա բաց է բոլոր տեսակի ավտոմեքենաների համար՝ անվաշղթաների կիրառման դեպքում:

Հայաստանի տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկատվությամբ, Հայաստանի տարածքում ավտոճանապարհները հիմնականում անցանելի են: Դժվարանցանելի է Սպիտակ-Խնկոյան ավտոճանապարհը, իսկ Ապարան-Ծիլքար ավտոճանապարհին առկա է մերկասառույց:

ՃԱՆԱՉՈՒՄ

ԷԼԴԱՐ ՇԵՆԳԵԼԱԻԱՅԻ ԱՍՏՂԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հունվարի 31-ին Թբիլիսիում, Շոթա Ռուսթավելու անվան կինոթատրոնի առջեւ, հանդիսավորապես բացվեց վրաց ճանաչված կինոռեժիսոր Էլդար Շենգելաիայի աստղը:

Հանդիսության շրջանակներում, անցկացվեց Շենգելաիային նվիրված տոնական երեկո, որի ընթացքում ներկայացվեցին կինոռեժիսորի նկարահանած ֆիլմերը եւ դրվագներ նրա կյանքից ու գործունեությունից:

Վրաց դերասանուհի Նատո Վաչնաձեի ու կինոռեժիսոր Նիկոլոզ Շենգելաիայի որդին՝ 83-ամյա Էլդար Շենգելաիան, նկարահանել է լայն ճանաչման արժանացած «Երկնագույն սարեր», «Տարօրինակները», «Սամանիշվիլու խորթ մայրը», «Արտասովոր ցուցահանդեսը» եւ այլ կինոնկարներ:

1979 թվականին նա արժանացել էր Վրաստանի ժողովրդական արտիստի, իսկ 1988 թվականին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆՈՐ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԸ՝ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վրաստանում փետրվարի 1-ից շրջանառության մեջ են դրվել 20, 50 եւ 100 լարի արժողությամբ նոր թղթադրամներ: Դրանք շրջանառության մեջ կլինեն հին նմուշի թղթադրամների հետ հավասարապես: Սա թղթադրամների առաջին զգալի փոփոխությունն է ազգային արժույթի գոյության ավելի քան 20 տարվա ընթացքում:

Նորացված թղթադրամների վրա պահպանվել է սկզբնական թեմատիկան, բայց, միեւնույն ժամանակ դրանց արտաքին տեսքը հարստացված է լրացուցիչ տարրերով: Փոփոխվել են նաեւ թղթադրամների չափերը. յուրաքանչյուր հաջորդը դարձել է նախորդից ավելի մեծ՝ արժողությանը համապատասխան: Դրամանիշերն ունեն պաշտպանության ավելի շատ աստիճաններ, ինչպես նաեւ հատուկ նշաններ, որոնք նշում են անվանական գները թույլ տեսնողների համար:

Բացի դրանից, մեծացված է թղթադրամների կայունությունը կեղտոտման եւ մաշվելու նկատմամբ: Շրջանառության մեջ գտնվող 5 եւ 10 լարի արժողությամբ թղթադրամներն Ազգային բանկը պլանավորում է նորացնել ավելի ուշ:

ՖՈՒՏԲՈԼ

ԴԻՐՔԵՐԸ ՄՆԱՑԻՆ ԳՐԵԹԵ ԱՆՓՈՓՈԽ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը:

Նոր աղյուսակում Վրաստանի հավաքականը պահպանեց իր դիրքերը եւ 286 միավորով մնաց 120-րդ տեղում: Կրկին նահանջ գրանցեց Հայաստանի հավաքականը: Նախորդի համեմատությամբ նահանջելով 2 աստիճանով՝ Հայաստանի թիմը 285 միավորով հանգրվանեց 123-րդ տեղում:

Աղյուսակը գլխավորում է Բելգիայի հավաքականը՝ 1494 միավորով: Երկրորդ եւ երրորդ տեղերում Արգենտինայի եւ Իսպանիայի հավաքականներն են, համապատասխանաբար՝ 1455 եւ 1347 միավորով: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Գերմանիայի, Չիլիի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Կոլումբիայի, Անգլիայի եւ Ավստրիայի հավաքականները:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Թբիլիսիի ... Զավախիշվիլու անվան համալսարան: 6.Մուրացանի վեպի հերոս ... Ամրամ: 10.Քաղաք Հայաստանի Շիրակի մարզում: 11.Ղազախստանի մայրաքաղաքը: 14.Արժեքավոր ...: 15.«Ասք ...ի գնդի մասին»: 16.Հայոց աստվածուհի, Արամազդի երկրորդ դուստրը: 19.Ներկա է, կա, գոյություն ունի: 20.«Այստեղ» բառը գրաբարում: 22.Մակերեսի չափման միավոր: 23.«...ի բոյը չինար է» (ժող. երգ): 26.Երկերեսանի, քծնող: 28.Խոհանոցային պարագա: 29.7-րդ նոտան: 30.Լոս Անջելեսի հայտնի լրագրողուհի Վոգելը: 31.Պարոնը լեհերեն: 33.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոս: 34.Իջեւանի գյուղերից: 36.Հնդկական ուտեստ (ճաշատեսակ): 38.Խաղալիք Կոստան-...: 39.Մտավորական ...: 42.Չէ-ի հակառակը: 44.Նար-Դոսի «Ես եւ ...» վիպակը: 46.Հերոսուհի նույն գրողի «Սպանված աղավնին» վիպակում: 47.Շվեյցարիայի «սիրտը»: 48.Ամենամեծ մայրցամաքը: 49.....առու, ...ակալ: 51.Միլանի հայտնի օպերան՝ Լա ...: 53.Ռադիոհաղորդավար ... Հալաջյան: 55.Հեռուստալրագրող Գլումովը: 56.Հայկական ծխախոտ ... բերդ: 58.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված մեծ վիպասանը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Գաճաճ պետություն պետության մեջ: 3.Վրաստանում քրիստոնեությունը տարածած կույսը: 4.Օլիմպիական չեմպիոն, բռնցքամարտիկ Մունչյանը: 5.Շշի փականը: 7.Մերձբալթյան պետություն: 8.Կախարդ, վհուկ: 9.Երեւանի Նորք-... վարչական շրջան: 12.Քաղաք եւ շաքարի գործարան Վրաստանում: 13.Ռուս մեծ գրող Ա.Պուշկինի դայակը: 17.Հայ գրող Մովսես ...: 18.Լծկան անասուն: 21.Քաղաք Հայաստանում: 24.... Ուդե, ... Բատոր: 25.Մաշտոցյան այբուբենի երկրորդ տառը: 26.Տառ, որի արժեքը 3,14 է: 27.Քաղաք Հայաստանի Սյունիքի մարզում: 28.Շատ վաղ, առավոտ ծեգին: 29.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 32.Հայ աղջկա տարածված անուն Թեհրանում: 35.Բարձր, վսեմ: 36.Հայոց այբուբենի ջեից հետոյի տառը: 37.Իմաստազուրկ, իմաստ չունեցող: 40.Տակ-ի հականիշը: 41.Բնությանը նպաստող: 43.Մեծանուն կոմպոզիտոր ... Բաբաջանյան: 45.Քանդված, ավերված: 46.Ռաֆֆու վեպերից: 47.Բեմարվեստի տեսակ: 50.Հացը դրանից է թխվում: 52.Քաղաք Ֆրանսիայում: 54.Շամիրամի սեը: 57.Մեսրոպյան այբուբենի վերջին տառերից:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 3.Հանելուկ: 9.Նանի: 10.Դիեզ: 11.Տեռոր: 12.Եղիշե: 13.Սակր: 15.Նմուշ: 17.Կրիպտոն: 19.Հարիսա: 21.Ամպրոպ: 24.Ֆալես: 26.Տաճար: 27.Քութեշ: 28.Ակրոպոլիս: 29.Կավատ: 31.Վիշապ: 33.Դինար: 34.Մալագա: 36.Ֆլորին: 37.Սաքսաուլ: 40.Առած: 43.Էմին: 45.Մելիք: 46.Շինել: 47.Օսլա: 48.Բզիբի: 49.Սեմինար:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ռաճա: 2.Լիտր: 3.Հեռակա: 4.Ներգի: 5.Լաերտ: 6.Կրիշնա: 7.Ադեն: 8.Ձեբու: 14.Կարիճ: 16.Մարուք: 18.Պելոպոնես: 19.«Հատակում»: 20.Ստրատեգ: 22.Մաքսվել: 23.Պաշտպան: 24.Ֆարադ: 25.Սալոր: 30.Վիլլա: 32.Շերամ: 35.Ասուլիս: 36.Ֆլանդր: 38.Քրքում: 39.Արշին: 41.Ռասա: 42.Ծմակ: 43.Էլբա: 44.Իմիր:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445